

«Յուքոմ» ՍՊԸ

**Համախմբված ֆինանսական հաշվետվություններ
2012թ. դեկտեմբերի 31-ին
ավարտված տարվա համար**



KPMG Armenia cjsc
8th floor, Erebuni Plaza Business Center,
26/1 Vazgen Sargsyan Street
Yerevan 0010, Armenia

Telephone + 374 (10) 566 762
Fax + 374 (10) 566 762
Internet www.kpmg.am

Անկախ աուդիտորական եզրակացություն

«Յուրոմ» ՍՊԸ
Ղեկավարությանը

Մենք աուդիտի ենք ենթարկել «Յուրոմ» ՍՊԸ-ի («Ընկերություն») և նրա դուստր կազմակերպությունների («Խումբ») կից ներկայացվող համախմբված ֆինանսական հաշվետվությունները, որոնք ներառում են ֆինանսական վիճակի մասին համախմբված հաշվետվությունը՝ առ 31 դեկտեմբերի 2012թ., հաշվետու տարվա համապարփակ ֆինանսական արդյունքների, սեփական կապիտալում փոփոխությունների և դրամական միջոցների հոսքերի մասին համախմբված հաշվետվությունները, ինչպես նաև ծանոթագրությունները, որոնք ներառում են հաշվապահական հաշվառման քաղաքականության հիմնական դրույթները և այլ բացատրական տեղեկատվություն:

Ղեկավարության պատասխանատվությունը համախմբված ֆինանսական հաշվետվությունների համար

Այս համախմբված ֆինանսական հաշվետվությունների՝ ֆինանսական հաշվետվությունների միջազգային ստանդարտների համաձայն կազմման և ճշմարիտ ներկայացման համար պատասխանատու է ղեկավարությունը: Ղեկավարությունը պատասխանատու է նաև այնպիսի ներքին վերահսկողության համակարգի համար, որը, ղեկավարության կարծիքով, թույլ կտա կազմել սխալների կամ խարդախության արդյունքում առաջացող էական խեղաթյուրումներից զերծ համախմբված ֆինանսական հաշվետվություններ:

Աուդիտորի պատասխանատվությունը

Մեր պատասխանատվությունն է անցկացված աուդիտի արդյունքում արտահայտել կարծիք համախմբված ֆինանսական հաշվետվությունների վերաբերյալ: Մենք աուդիտն անցկացրեցինք Աուդիտի միջազգային ստանդարտներին համապատասխան: Այդ ստանդարտներով պահանջվում է, որ մենք հետևենք էթիկայի պահանջներին և աուդիտը պլանավորենք ու իրականացնենք համախմբված ֆինանսական հաշվետվություններն էական խեղաթյուրումներից զերծ լինելու մասին ողջամիտ երաշխիք ձեռք բերելու նպատակով:

Աուդիտորական աշխատանքները ներառում են այնպիսի ընթացակարգերի իրականացում, որոնք թույլ են տալիս ձեռք բերել աուդիտորական ապացույցներ համախմբված ֆինանսական հաշվետվություններում ներկայացված գումարների և բացահայտումների վերաբերյալ: Ընտրված ընթացակարգերը կախված են աուդիտորի դատողությունից, ներառյալ համախմբված ֆինանսական հաշվետվությունների՝ խարդախությամբ կամ սխալներով պայմանավորված էական խեղաթյուրումների ռիսկի գնահատումը: Այս ռիսկը գնահատելիս աուդիտորը դիտարկում է համախմբված ֆինանսական հաշվետվությունների պատրաստման և ճշմարիտ կերպով ներկայացման համար կիրառվող ներքին վերահսկողության համակարգը՝ նպատակ ունենալով մշակել համապատասխան աուդիտորական ընթացակարգեր, բայց ոչ կարծիք արտահայտել կազմակերպության ներքին վերահսկողության համակարգի արդյունավետության վերաբերյալ: Աուդիտորական աշխատանքները ներառում են նաև համախմբված ֆինանսական հաշվետվությունների կազմման ժամանակ կիրառված հաշվապահական հաշվառման քաղաքականության համապատասխանության, ղեկավարության կողմից կատարված հաշվապահական գնահատումների խելամտության, ինչպես նաև համախմբված ֆինանսական հաշվետվությունների ընդհանուր ներկայացման գնահատումը:

Մենք գտնում ենք, որ ձեռք բերված աուդիտորական ապացույցները բավականաչափ են և համապատասխան՝ մեր կարծիքի հիմք հանդիսանալու համար:

Եզրակացություն

Մեր կարծիքով համախմբված ֆինանսական հաշվետվությունները, բոլոր էական առումներով, ճշմարիտ են ներկայացնում Խմբի ֆինանսական վիճակն առ 31-ը դեկտեմբերի 2012թ., ինչպես նաև նրա գործունեության արդյունքներն ու դրամական միջոցների համախմբված հոսքերը այդ ամսաթվին ավարտված տարվա համար՝ Ֆինանսական հաշվետվությունների միջազգային ստանդարտների համաձայն:


Լուսինե Քերպուշե
Տնօրեն


Տիգրան Գասպարյան
Աուդիտի բաժնի ղեկավար

KPMG Armenia

«Քեյ-Փի-Էմ-Ջի Արմենիա» ՓԲԸ
29 հունիսի 2013թ.



հազ. դրամ	Ծնթգ.	2012թ.	2011թ.
Ակտիվներ			
Հիմնական միջոցներ	11	11,505,015	6,992,626
Ոչ նյութական ակտիվներ	12	1,147,118	101,696
Այլ ոչ ընթացիկ ակտիվներ		5,400	26,208
Ոչ ընթացիկ ակտիվներ		12,657,533	7,120,530
Պաշարներ		81,258	90,742
Առևտրական և այլ դեբիտորական պարտքեր	14	737,127	361,066
Փոխհատուցման ենթակա ԱԱՀ		1,133,755	905,887
Ընթացիկ հարկային ակտիվ		-	6,815
Կանխավճարներ	13	384,252	1,166,497
Տրված փոխառություններ		63,236	36,100
Դրամական միջոցներ և դրանց համարժեքներ	15	103,317	86,192
Ընթացիկ ակտիվներ		2,502,945	2,653,299
Ընդամենը ակտիվներ		15,160,478	9,773,829
Սեփական կապիտալ			
Կանոնադրական կապիտալ	16	15,050	15,050
Կուտակված վնաս		(908,743)	(730,762)
Լրացուցիչ կապիտալ		4,856,067	1,982,397
Ընկերության մասնակիցներին վերագրելի սեփական կապիտալ		3,962,374	1,266,685
Չվերահսկող բաժնեմաս		-	16,665
Ընդամենը սեփական կապիտալ		3,962,374	1,283,350
Ոչ ընթացիկ պարտավորություններ			
Վարկեր և փոխառություններ	17	6,420,894	4,232,627
Հետաձգված հարկային պարտավորություններ	18	1,052,367	367,315
Ոչ ընթացիկ պարտավորություններ		7,473,261	4,599,942
Ընթացիկ պարտավորություններ			
Վարկեր և փոխառություններ	17	1,939,126	-
Առևտրական և այլ կրեդիտորական պարտքեր	19	1,707,448	3,102,694
Վճարվելիք ԱԱՀ և այլ հարկեր		-	787,843
Ընթացիկ հարկային պարտավորություն		78,269	-
Ընթացիկ պարտավորություններ		3,724,843	3,890,537
Ընդամենը պարտավորություններ		11,198,104	8,490,479
Ընդամենը սեփական կապիտալ և պարտավորություններ		15,160,478	9,773,829

«Յուքոմ» ՍՊԸ
Համապարփակ ֆինանսական արդյունքների մասին համախմբված հաշվետվություն
2012թ. դեկտեմբերի 31-ին ավարտված տարվա համար

հազ. դրամ	Ծնթ.	2012թ.	2011թ.
Հասույթ	7	5,128,344	2,149,841
Այլ եկամուտ		48,783	9,343
Ինտերնետի և հեռուստաալիքների ձեռքբերում		(1,844,630)	(817,143)
Մաշվածության և ամորտիզացիայի ծախս		(1,036,984)	(515,121)
Աշխատակազմի գծով ծախսեր		(648,183)	(305,345)
Վաճառքի ինքնարժեք		(74,942)	(114,526)
Նյութեր, ծրագրային ապահովում և անվտանգություն		(53,647)	(87,202)
Շուկայավարման ծախսեր		(99,871)	(81,401)
Այլ ծախսեր	8	(550,276)	(331,581)
Գործառնական գործունեության արդյունքները		868,594	(93,135)
Ֆինանսական եկամուտ	9	218	120
Ֆինանսական ծախսեր	9	(956,356)	(537,890)
Զուտ ֆինանսական ծախսեր		(956,138)	(537,770)
Վնաս նախքան շահութահարկով հարկումը		(87,544)	(630,905)
Շահութահարկի գծով (ծախս)/փոխհատուցում	10	(90,437)	75,829
Վնաս և ընդամենը համապարփակ վնաս տարվա համար		(177,981)	(555,076)
Վնաս և ընդամենը համապարփակ վնաս վերագրելի			
Ընկերության մասնակիցներին		(177,981)	(554,834)
Չվերահսկող բաժնեմասին		-	(242)
Վնաս և ընդամենը համապարփակ վնաս տարվա համար		(177,981)	(555,076)

Այս համախմբված ֆինանսական հաշվետվությունները հաստատվել են ղեկավարության կողմից 2013թ. հունիսի 29-ին և ստորագրվել են վերջինիս անունից:

Հայկ Եսայան
Տնօրեն



Արման Պողոսյան
Ֆինանսական տնօրեն



Համապարփակ ֆինանսական արդյունքների մասին համախմբված հաշվետվությունը պետք է դիտարկվի 9-ից 48-րդ էջերում ներկայացված համախմբված ֆինանսական հաշվետվությունների բաղկացուցիչ մասը կազմող ծանոթագրությունների հետ մեկտեղ:

հազ. դրամ	Ընկերության մասնակիցներին վերագրելի				Չվերահսկող բաժնեմաս	Ընդամենը սեփական կապիտալ
	Կանոնադրական կապիտալ	Լրացուցիչ կապիտալ	Կուտակված վնաս	Ընդամենը		
Մնացորդը առ 1 հունվարի 2011թ.	15,050	1,825,603	(175,928)	1,664,725	-	1,664,725
Սկզբնական գեղչ մասնակցից ցածր տոկոսադրույքով ստացված վարկերի և փոխառությունների գծով՝ առանց 39,199 հազար դրամ գումարով հետաձգված հարկի (ծնթգ. 17)	-	156,794	-	156,794	-	156,794
Վնաս և ընդամենը համապարփակ վնաս տարվա համար	-	-	(554,834)	(554,834)	(242)	(555,076)
Չվերահսկող բաժնեմասով դուստր կազմակերպության ձեռքբերում	-	-	-	-	16,907	16,907
Մնացորդը առ 31 դեկտեմբերի 2011թ.	15,050	1,982,397	(730,762)	1,266,685	16,665	1,283,350
Մնացորդը առ 1 հունվարի 2012թ.	15,050	1,982,397	(730,762)	1,266,685	16,665	1,283,350
Սկզբնական գեղչ մասնակցից ցածր տոկոսադրույքով ստացված վարկերի և փոխառությունների գծով՝ առանց 718,417 հազար դրամ գումարով հետաձգված հարկի (ծնթգ. 17)	-	2,873,670	-	2,873,670	-	2,873,670
Վնաս և ընդամենը համապարփակ վնաս տարվա համար	-	-	(177,981)	(177,981)	-	(177,981)
Չվերահսկող բաժնեմասի ձեռքբերում՝ առանց վերահսկողության փոփոխության	-	-	-	-	(16,665)	(16,665)
Մնացորդը առ 31 դեկտեմբերի 2012թ.	15,050	4,856,067	(908,743)	3,962,374	-	3,962,374

Սեփական կապիտալում փոփոխությունների մասին համախմբված հաշվետվությունը պետք է դիտարկվի 9-ից 48-րդ էջերում ներկայացված համախմբված ֆինանսական հաշվետվությունների բաղկացուցիչ մասը կազմող ծանոթագրությունների հետ մեկտեղ:

հազ. դրամ	2012թ.	2011թ.
Դրամական միջոցների հոսքեր գործառնական գործունեությունից		
Հաճախորդներից ստացված դրամական միջոցներ, ներառյալ ԱԱՀ	5,837,159	2,400,951
Մատակարարներին վճարված դրամական միջոցներ	(4,435,587)	(1,302,779)
Աշխատակիցներին վճարված դրամական միջոցներ	(788,869)	(390,453)
Վճարումներ շահութահարկի գծով	(44,501)	-
Վճարված հարկեր՝ բացառությամբ շահութահարկի	(1,818,820)	(420,912)
Վճարված տոկոսներ	(239,518)	(64,051)
Գործառնական գործունեությամբ (օգտագործված)/ ստացված զուտ դրամական միջոցներ	(1,490,136)	222,756
Դրամական միջոցների հոսքեր ներդրումային գործունեությունից		
Տրված փոխառություններ	(64,000)	(38,940)
Կանխավճարներ ներդրումների գծով	-	(119,643)
Դուստր կազմակերպությունների ձեռքբերում՝ առանց ձեռքբերված դրամական միջոցների	(1,077,540)	(70,037)
Տրված փոխառությունների մարում	42,100	2,840
Ստացված տոկոսներ	218	7
Հիմնական միջոցների ձեռքբերում	(4,685,891)	(2,696,634)
Ոչ նյութական ակտիվների ձեռքբերում	-	(301)
Վերադարձված կանխավճարներ ոչ ընթացիկ ակտիվների գծով	980,000	-
Ներդրումային գործունեությամբ օգտագործված զուտ դրամական միջոցներ	(4,805,113)	(2,922,708)
Դրամական միջոցների հոսքեր ֆինանսավորման գործունեությունից		
Հոսքեր վարկերից և փոխառություններից	12,525,543	10,108,131
Վարկերի և փոխառությունների մարում	(6,203,525)	(7,385,285)
Չվերահսկվող բաժնեմասի ձեռքբերում	(16,665)	-
Զուտ դրամական միջոցներ ֆինանսավորման գործունեությունից	6,305,353	2,722,846
Դրամական միջոցների և դրանց համարժեքների զուտ աճ	10,104	22,894
Դրամական միջոցները և դրանց համարժեքները հունվարի 1-ի դրությամբ	86,192	63,582
Փոխանակման փոխարժեքի փոփոխության ազդեցությունը դրամական միջոցների և դրանց համարժեքների վրա	7,021	(284)
Դրամական միջոցները և դրանց համարժեքները դեկտեմբերի 31-ի դրությամբ (ծնթ. 15)	103,317	86,192

Դրամական միջոցների հոսքերի մասին համախմբված հաշվետվությունը պետք է դիտարկվի 9-ից 48-րդ էջերում ներկայացված համախմբված ֆինանսական հաշվետվությունների բաղկացուցիչ մասը կազմող ծանոթագրությունների հետ մեկտեղ: